

ԱՆԲԱՂԴԻ ԵՐԳԸ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Ո՛հ, թըռի՛ր, գընա՛,
Երջանի՛կ թըռչնիկ,
Երկընքում ազատ
Պըտոյտներ արա՛.
Եւ երգի՛ր այնտեղ
Հոգեզմալ տաղեր,
Թո՛ղ քո ձայնն անոյշ
Փարատէ իմ վիշտ:
Կ՛ուզէի քեզ հետ
Սաւառնել վերև՝
Կապոյտ երկընքի
Կամարի տակին.
Բայց չ՛ունիմ թևեր—՝
Բարձրանամ քեզ հետ,
Թօթափեմ ինձնից
Աշխարհի փոշին:
Կ՛ուզէի քեզ հետ
Միաձայն երգել,
Քաղցրաձայն երգել
Կ՛ուզէի քեզ հետ.
Բայց չ՛ունիմ ես ձայն

Քո ձայնի նրման,
Կախարդէ՛—գիւթիչ
Քո հանճար չ՛ունիմ,
Որ մաղեմ—մաղեմ,
Ինչպէս զով անձրև,
Աշխարհի վերայ
Դըրախտի ձայներ:
Գոնէ դու, օրհնեա՛լ,
Երջանի՛կ թըռչնիկ,
Դառնացած հոգուս
Մըխիթար եղի՛ր,
Երբ պայծառ արև
Երկընքի վերայ
Սևանայ գըլխիս
Խաւարի նրման:

2.

Ո՛հ, էլ մի՛ կանգնիլ,
Իմ սիրո՛ւն թըռչնիկ,
Շուտ թըռի՛ր, հասի՛ր
Ծաղկազարդ անտառ,

Զովասունն անտառ:
 Բիւրաւոր ծառեր
 Քեզ այնտեղ անշուշտ
 Ապաստան կը տան
 Սիրալիւր դէմքով.
 Լայն առուններէ
 Սառնորակ ջրեր
 Խայտալով՝ այնտեղ
 Խոխոջում են միշտ...
 Եւ կանաչ թըփեր
 Նոցա ափերին
 Գոյնըգոյն ծաղկանց
 Ուղարկում են միշտ
 Նազելի ողջոյն,
 Օղային համբոյր:
 Հովանի նոցա—
 Վիթխարի ծառեր՝
 Ախոյեան կանգնած
 Երկընքի տապի՝
 Կըրակի դիմաց:
 Մի ընտիր ստւերում
 Թըփիկի վերայ
 Ոստիկից ամուր
 Կը կապես մամուռ.
 Մանրիկ ոտներով,
 Սըրածայր կըտցով
 Քեզ համար կ'հիւսես
 Դու գողտրիկ մի բոյն:
 Կը ջանայ քեզ հետ
 Քո մատաղ ընկեր.
 Կը սիրէ նա քեզ
 Մըտերիմ սիրով:

Գըթառատ բնութիւն
 Զեզ պարգև կը տայ—
 Քընքըշիկ ձագեր,
 Մըխիթար հոգու:
 Երբ հասնին նոքա,
 Խմբովին կ'երգէք,—
 Անտառի խորքից
 Կը ձայնեն ձեզ հետ
 Բաղդաւոր ձեզ պէս
 Բիւրաւոր գոյգեր:
 Երջանիկ կ'ապրես,
 Իմ սիրո՛ւն թըռչնիկ,
 Հիւրընկալ բնութեան
 Փայփայտող գըրկում:

3.

Քեզ ի՞նչ փոյթ թէ կայ
 Անտառիցը դուրս
 Արևից այրւած
 Վըշտակիր թըշառ,
 Որ ողբում է միշտ
 Իւր տըխուր օրեր,
 Թառամած հասակ,
 Խորտակած յոյսեր...
 Է՛հ, սիրո՛ւն թըռչնիկ,
 Սըլացի՛ր, գընա՛,
 Հեռացի՛ր ինձնից...
 Թո՛ղ ես լամ—ողբամ
 Իմ օրեր խաւար.
 Իսկ դու ըշտապի՛ր
 Զովասունն անտառ:

Մօսկա, 1889 Թ., 18 մարտի: